

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ

ՀԱՅ ԼՐԱԳՐԱՅԻՆ ԾԱՂՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԱԿԻԶԲԸ

Հայ լրագրական ծաղրանկարչության սկիզբը համարվում է 1859 թ.¹ Հ. Սվաճյանի «Մեղու» երգիծաթերթի ծաղրանկարները նկատի ունենալով: Ինչպես հայտնի է, «Մեղուն» լույս է տեսել 1856 թվականի սեպտեմբերից, սակայն ծաղրանկարներ տպագրել է 1859 թ.:

Բայց արդյո՞ք ճիշտ է որոշված այդ թվականը:

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի գրականության և արվեստի թանգարանում պահպանվող Թորոս Ազատյանի արխիվային ֆոնդերում մեզ հանդիպեց մի վավերագիր, որը երեք տարով հետ է տանում հայ լրագրական ծաղրանկարչության սկիզբը, այն հասցնելով մինչև Սվաճյանի «Մեղվի» հրատարակման առաջին ամիսները, 1856 թ. հոկտեմբերի, բայց ոչ թե կապելով «Մեղվի»․ այլ մի այլ պարբերականի հետ:

Դա «Զվարճախոս» երգիծաթերթն է, հիմնականում հայատառ թուրքերենով հրատարակվող մի պարբերական, որից լույս է տեսել ընդամենը երեք համար: Առաջին համարը ունեն Վիեննայի Մխիթարյանների, երրորդ համարը պահպանվում է մեր թանգարանում: Թե Վենետիկի Մխիթարյանների մոտ որևէ համար կա՞ մեզ անհայտ է:

Այս պարբերականի գոյության մասին գիտեն Դր. Գալեմբյարյանը, Գարեգին Լևոնյանը և Ռ. Կարապետյանը:

Գալեմբյարյանը «Զվարճախոսը» հրատարակող Զվարճասիրաց ընկերության մասին մի քանի տող գրելուց հետո՝ պարբերականի վեոարերջյալ տալիս է հետևյալ տեղեկությունները. «Այս թերթն միաժալ երկու թուղթ էր, կեսն հայատառ տաճկերեն, և մյուս կեսն՝ հայերեն: Բովանդակությունն վերնագիրներեն արդեն կարելի է դուշակել. պատկերն, ծաղրն ու բանասիրությունն իրարու ընդդրովին հարմար: Թերթն յուր 3-րդ թիվը «կատարյալ» համարեցավ, և 4-րդ թիվն լույս չկրցավ տեսնել, որով զվարճասեր խմբագրությունն հասավ և կը հասնի յուր նպատակին»¹:

Հ. Ռափայել Կարապետյանն իր «Լիակատար ցուցակ հայերեն լրագիրներու» գրքում նշում է, որ «Զվարճասեր»-ից մի համար (առաջին համարը) կա իրենց մոտ²: Ըստ երևույթին Գալեմբյարյանն իր տվյալները վերցրել է այդ մեկ համարից:

Գ. Լևոնյանը 1895 թ. հրատարակած «Հայոց պարբերական մամուլը» գրքում բավական լայն տեղ է հատկացրել «Զվարճախոսին», բայց բերած փաստերից երևում է, որ նրա տրամադրության տակ չի եղել և ոչ մի համար:

1 Հ. Գրիգորիս Վ. Գալեմբյարյան, Պատմություն հայ լրագրության, հատ. Ա, Վիեննա, 1893, էջ 160—161:

2 Հ. Ռափայել Կարապետյան, Լիակատար ցուցակ հայ լրագրության, որոնք կը գտնվին Մխիթարյան մատենադարանին մեջ, Վիեննա:

այդ հատվածը շարադրել է Գալեմբյարյանի տվյալների հիման վրա, իր կողմից ըստ երևույթին ենթադրությամբ, «Զվարճախոսին» հատկացնելով հետևյալ լայն ծրագիրը. «Առականեր, հանելուկներ, խրատներ, դավեշտական գրվածքներ, ծաղրապատկերներ, երգիծաբանական հատվածներ, բառախաղ, շուտասելություն...»³:

Լեոնյանը 1934 թ. լույս ընծայած «Հայոց պարբերական մամուլը» գրքում նշում է միայն թերթի վերնագիրը և ում կողմից հրատարակված լինելը, հրատարակության թիվն էլ սխալմամբ դնելով 1855—1856:

«Զվարճախոսը» հիշատակել է նաև Ալեքսանդր Երիցյանը իր մի հոդվածում, որը լույս է տեսել «Արձագանքում» 1882 թ. (№ 22):

Ինչպես տեսնում ենք՝ ընդամենը երեք համար լույս տեսած այդ պարբերականի մասին, բավական շատ աղբյուրներ ունենք, բայց դժբախտաբար դրանք բոլորն էլ մեկը մյուսին հետևելով կրկնել են նույն փաստը, թե՛ պարբերականը «Զվարճասերների» Միության օրգանն էր, և թե՛ ընդամենը երեք համար է լույս տեսել:

«Զվարճախոսը» մեզ հետաքրքրում է երկու նկատառումով: Նախ՝ այն լուսարանում է հայատառ-թուրքերեն պարբերական մամուլի պատմության մի ուշագրավ էջ, և երկրորդ՝ որոշում է հայ լրագրային ծաղրանկարչության վավերական սկիզբը 1856 թ.:

Հայտնի է, որ հայատառ թուրքերենով լույս են տեսել բազմաթիվ պարբերականներ՝ օրաթերթեր, ամսագրեր և այլն: Բանասեր Գ. Լեոնյանը դրանց թիվը հասցնում է 22-ի: Երկար տարիների մեր պրպտումները այդ թիվը կրկնապատկելով հասցրին մինչև 40-ի⁴:

1856 թվականին Ղրիմի պատերազմի անմիջական թելադրանք հանդիսացող սուլթանական հայտնի ռեֆորմներից հետո Կ. Պոլսում լույս են տեսնում մի շարք թերթեր ու ամսագրեր, այդ թվում երկու հայատառ-թուրքերեն պարբերականներ: Դրանցից մեկը Տերոյեյեցի «Ձոհալն» էր, մյուսը՝ նույն 1856 թվականի նոյեմբերից լույս տեսած «Զվարճախոս» պարբերականը:

Հայատառ-թուրքերեն թերթեր և գրքեր հրատարակվում էին թուրքախոս այն հայերի համար, որոնք չգիտեին հայերեն: Այն թվականներին, երբ լույս է տեսնում «Զվարճախոսը», հրապարակի վրա էր Միք. Նալբանդյանի գնահատմանն արժանացած «Ազապի» վեպը (1851 թ.), նույն հեղինակի՝ Հովսեփ Վարդանյանի «Նապոլեոն Բոնապարտի պատմությունը» ստվար աշխատությունը՝ բաղկացած 6 մեծադիր հատորներից, և այլ գրքեր: Սրանք ընթերցանության և ուսումնասիրման համար այնպիսի արժեքավոր գրքեր էին, որ, ինչպես վկայում են թուրք բանասերները, անգամ թուրք ղարգացած խավը հեշտությամբ սովորում էր հայերեն Մեսրոպյան տառերը և հափշտակությամբ կարդում այդ գրքերը:

«Զվարճախոսը» հրատարակողների նպատակն է եղել, ըստ երևույթին, հավասարաշափ սպասարկել և՛ հայախոս, և՛ թուրքախոս հայերին, քանի որ այն լույս է տեսել երկու լեզվով:

Թերթի վերնագիրը հայերեն է: Ուշագրավ մի նկարի տակ, որտեղ երևում

3 Գ. Լեոնյան, Հայոց պարբերական մամուլը, Թիֆլիս, 1895, էջ 160—161:

4 Այս մասին ընդարձակ տե՛ս մեր «Հայատառ-թուրքերեն հայ մամուլը» հոդվածը, տպված «Հայ պարբերական մամուլի պատմությունից» ժողովածուում, Երևան, 1963, էջ 239—274:

ԱՆՈՇ ՐԱՆԿԱ



Անոշ Րանկա
Հայկական
Բնակարան



Հայկական
Բնակարան
Հայկական
Բնակարան

Հայկական
Բնակարան
Հայկական
Բնակարան

«Զվարճախոս» թերթի 1856 թ. № 3-ի երրորդ էջը:

է լայնեզր ֆեսի մեջ մի փոքրիկ զլուխ, մի երիտասարդ նստել է սեղանի մոտ, սեղանի վրա դրված են թանաքաման, փետրե գրիչ, պատից կախ է ընկած ջութակ։ Երևում են ինչ որ նկարների ուրվագծեր և գրքերի պահարան։ Նկարի տակ՝ թերթի վերնագիրն է «Զվարճախոս» օրագիր պատկերազարդ, ծաղրաբանական և բանասիրական. օրագիր ամենուն համար»։

Ձնայած այս շատ խոսուն վերնագրին, մեր տրամադրության տակ գտնվող համարի պարունակությունը գրեթե ամբողջովին թուրքերեն է։

Այնտեղ տպագրված է երեք նյութ թուրքերեն, որն զբաղեցնում է պարբերականի երեք և կես էջը, մեկ նյութ հայերեն, որն զբաղեցնում է չորրորդ էջի երկու փոքրիկ սյունակները։

«Զվարճախոսը» աշխարհիկ բովանդակություն ունեցող, անմիջապես հայ հասարակական կյանքն արտացոլող հայատառ թուրքերեն առաջին պարբերականն է, որտեղ սուր քննադատության են ենթարկվում ժամանակի պոլսահայ քաղքենիական բարքերը։ Թերթի այդ համարի ավելի քան մեկ և կես էջը զբաղեցնում է «Ալաֆրանկա» վերնագրով հոդվածը, որն ուղղված է եվրոպական բարքերը կապկորեն ընդօրինակող թեթևաբաբո ֆրանսամուլների դեմ։ Բացի այդ շատ կարևոր հոդվածից, ամբողջ 3-րդ էջում նույն բարքերը քննադատվում են արդեն ծաղրանկարներով։

«Ալաֆրանկա» հոդվածի սկզբում անծանոթ հոդվածագիրը հարց է տալիս, թե ինչ է նշանակում «ալաֆրանկան». կա՞նք նրա լավ ու վատը, օգտակարն ու վնասակարը։ Ապա, իր հարցին պատասխանելով գրում է. «Երիտասարդների համար «ալաֆրանկան» չափազանց նեղ շալվար հագնելն է, նույնքան նեղ բաճկոն, սուր քիթ կոշիկներ. նրանց համար բնորոշ է «մոն շեր» մադամ, մադամակ և նման բառերի գործածությունը։

Այնուհետև հոդվածագիրը մանրամասնորեն նկարագրում է այս «ալաֆրանկաճիներին» նիստ ու կացը, կենցաղը, վարվելակերպը, կանաց միջավայրում, ու բերում է ընդարձակ մի խոսակցություն նման այլասերվածների լեզվից, որը ֆրանսերենի և թուրքերենի ահավոր մի խառնուրդ է հայերեն որոշ բառերի օգտագործմամբ։

Յուրյց տալու համար Կ. Պոլսի օտարախոս հայերի ժարգոնային լեզուն՝ սրանից ավելի քան հարյուր տարի առաջ, ավելորդ չենք համարում մեջ բերել մի հատված։ Դա հիմնականում թուրքախոս հայ հարուստների խոսակցական լեզուն է, ֆրանսերեն բառապաշարի տգետ շարաշահումով։

«—Մո, մոնշեր, պիր մեքթուպ յազտըմ ամա, պաղալըմ նասըլ յոլլայաճաղըզ։

—Քիմե՞... մատմազել Պ... յե մի։

—Սորա րսըն։

—Էյ, օ մեքթուպ յանընտա՞ մը։

—Յանըմտա, թոլումուն ճեպ իջինդե» և այլն։

Հայատառ թուրքերեն մյուս հոդվածը կոչվում է «Տյուշ չըգարան պիր դարը», այսինքն՝ «Երազներ գուշակող մի կին», ուղղված է սնոտիապաշտության, երազներին հավատալու դեմ։ Բովանդակությունը հետևյալն է. մի մարդ իր երազն է պատմում երազագուշակ մի կնոջ. ասում է, թե երազում ծովի վրա գտնվող մի տեղ էր գնում, բայց ձիու վրա էր նստած, հետո սկսեցի ամպերի մեջ թռչել, թեև ոչ թևեր ունեի, ոչ էլ օդապարիկի մեջ էի։ Կինը գուշակում է՝ ծովը ուրախություն է, այս օրերս մի բանից շատ ուրախանալու ես, ձիի վրա

նստիլը մեծ բախտի բացվիլ է, թուշիլը նպատակի հասնել, թշնամիներին հաղթել է: Մարդը շնորհակալություն է հայտնում գուշակող կնոջը, վերադառնում է տուն, բարձրանալիս աստիճանից ընկնում է և ոտը կոտրում: Գնում է կնոջը հարցնում, թե ուր է, որ բախտի էր արժանանալու: Կինը պատասխանում է.

— Այ որդի, աստիճաններից ընկել ես և ողջ ես մնացել. դրանից մեծ բախտավորություն կլինի:

«Զվարճախոսի» մյուս ուշագրավ կողմն այն է, որ այն առաջին թերթն է, որ ծաղրանկարներ է հրատարակել:

Ուստի հայ լրագրային ծաղրանկարչության պատմությունը պետք է սկսել 1856 թվականից:

«Զվարճախոսի» ծաղրանկարները արտահայտում են նույն գաղափարները, ինչ հողվածները. այստեղ էլ կենտրոնական հարցը օտարամոլության, ալաֆրանկայի քննադատությունն է: Այս տեսակետից ուշագրավ է այն ծաղրանկարի մակագրությունը, որտեղ ֆրանսամոլ ծնողները գերերջանիկ ժպտով հայտնում են գոհունակություն, որ իրենց դուստրը արդեն դաշնամուր է նվագում: Կինը ասում է ամուսնուն.

— Մեր աղջիկը լավ ու վատ ֆրանսերեն ջարդում է, դաշնամուր նվագել էլ եթե սովորի՝ արդեն կարող է դառնալ բոլորովին ալաֆրանկա մի բան:

Այդ այն սերունդն է, որը հանրագուտ որևէ զբաղմունքի փոխարեն մոդաների խանութներից դուրս չի գալիս, ինչպես ցույց է տալիս առաջին նկարը:

Ասացինք, որ «Զվարճախոսի» մեր ձեռքի տակ գտնվող համարում մի նյութ էլ հայերեն է տպագրված: Ըստ էության դա բնութագրական չէ թերթի ուղղության ու ծրագրի համար. պարզապես այլ և այլ լուրեր են հաղորդվում նույն վերնագրի տակ. լուրերից մեկում խոսվում է Հնդկաստանում գործող անգլիական մի ընկերության դրամագլխի մասին, իսկ մի երկրորդում՝ երեխաներին ծեծելու սովորության մասին:

Թերթի վերջին էջի ներքևում գրված է. «Հրատարակիչը զվարճասիրաց ընկերության»: Թե ովքեր են եղել այդ ընկերությունը կազմողները, մեզ հայտնի չէ:

Այսպիսով, 1856 թ. վերջերին լույս տեսած «Զվարճախոս» պարբերականը, մեր բանասիրությանը կարող է զբաղեցնել երկու նկատումով: Նախ որպես հայատառ թուրքերեն մամուլի ուշագրավ նմուշներից մեկը, որը հիսնական թվականների կեսերից սուր ծաղրի է ենթարկել Եվրոպամոլությունն ու պոլսահայ քաղքենիական խավի այլասերումը, և երկրորդ՝ «Զվարճախոսում» են տպագրվել հայ առաջին կենցաղային ծաղրանկարները: Թե ով է եղել այդ ծաղրանկարների հեղինակը, կարոտ է հետազա ուսումնասիրման: